# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

Գ. Գառնի 28 .հուլիսի 2021թ.

«ՀՀ Կոտայքի մարզի <<Գառնիի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն պարտականությունները կատարող, ի դեմս Գ. Ուրիխանյանի,մի կողմից (այսուհետ՝ Պատվիրատու), <<ԱԳԱԹ-777 >> ՍՊԸ - ն, ի դեմս տնօրեն Դ. Ենայանի, որը գործում է սահմանափակ պատասխանատվության ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 06.07.2021թ. կնքված N ՀՀԿՄԳԻՀԴ ԳՀԱՇՁԲ 21/01 պայմանագիրը որոշեցին կնքել սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Կապալառի մոտ առաջացել է պայմանագրով նախատեսված նորոգման աշխատանքների ծավալների ավելացման և պակասեցման անհրաժեշտություն:

Կողմերը հիմք ընդունելով նորոգման աշխատանքների ծավալների ավելացման և պակասեցման անհրաժեշտությունը և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, որոշեցին պայմանագրի գնի մինչև 10%-ի չափով ավելավնել նորոգման աշխատանքների ծավալը/հիմք ընդունելով <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի փ-րդ ենթակետը/:

Կապալառի կողմից լրացուցիչ նորոգման աշխատանքների գումարը կկազմի 583 972 /հինգ հարյուր ութսուներեք հազար ինը հրայուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Նորոգման աշխատանքների ծավալների գինը ներառում է հարկերը, տուրքերը և օրենսդրույամբ սահմանված այլ վճարները: Արդյունքում Պայմանագրի առավելագույն կումարը կկազմի 6423694 /վեց միլիոն չորս հարյուր քսաներեք հազար վեց հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Սույն համաձանյագրում կատարված փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանգրով Կողմերի ստանձնած իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ: Սույն համաձայնագիրը կազմված է 1 /մեկ / էջից, կնքվում է երկու օրնակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կոցմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ,,Գառնիի N 1 հիմնական դպրոց,, ՊՈԱԿ | <<ԱԳԱԹ-777 >> ՍՊԸ |
| ՀՎՀՀ 03510595 | ՀՀ,Ք.Երևան, Շիրակի փակուղի 4 |
| Հ/Հ 900108000309 | Հ/Հ 1150000285850100 |
| Դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| Գ. Ուրիխանյան ------------------------- | ՀՎՀՀ 01807983 |
| (ստորագրություն) | տնօրեն________________ |
| Կ.Տ | (ստորագրություն) |
| | Կ.Տ |